

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի պուրկարիա

Արա
Տարեկ. 2 ֆր.
վեցամս. 6 "
վմերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆ

Գրութիւնք հա
շէն տրուի:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

2. ՏԱՐԻ

ՄԱՐՏ. 18 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1902

ԹԻԻ 244

ԴԻՄԱԿԱԽՈՐՆԵՐԸ

Զարմանալի բան.

Բարեկենդանն անցաւ ու տակաւին գիմա-
կաւոր կը տեսնեմ շաւեքը:

Ուր որ երթաւ, քնկերութեան ո՛ր խաւե-
րուն մէջ ալ մանեա, անտարակոյս կը գտնեա զա-
նոնք: Աչքդ գոցէ՛, ու ժող խփէ՛ որ լոյս չտեսնես,
երկարէ ձեռքդ ալ կը ցածիդ չափ, ու երեք բռ-
նածիդ երկուքը գիմակաւոր պիտի ըլլան ան-
պատճառ, գիմակաւոր. . .

Գձուձ բարքեր, այն աստիճան ինկած ենք
որ, մենք չատերը անգիմակ չեն կը ցած ապրիլ,
ու գիմակը իրաւամբ մեծ դեր կը խաղայ կեան-
քի մէջ:

Հեղահամբոյր, համեստ ու շնորհալի անձնա-
ւորութիւններ են անոնք. զէթ այնպէս կը խոր-
հիւս կը համակրիս անոնց, կը ժպտիս ու կը սի-
րես պաշտելու աստիճան, եղբայր կանուանես
զանոնք ու գորգուրանքդ չափ չունենար:

Ուրախութեան, զուարթութեան, երջան-
կութեան վայրկեաններուդ մի փնտռեր զանոնք:
Անոնք կը փնտռեն քեզ: Շուրջդ բոլորած կը
խնդակցին ու երջանկագոյն ժամեր, օրեր կը
մաղթեն քեզ: Օրը իրիկուն չըլլար կարծես, ու
երանի թէ արեւը մարը չմտնէր կրտս. այնչափ
հեշտ կանցնի կեանքդ: Գժբազմութիւն մը,
սակայն, բաւական է, զրկելու է քեզ մտերիմ
կարծած հղբայրներէդ (°): Ի զո՞ք կը փնտռես
զանոնք, ի զուր կաղաղակես, ձայնդ մէկը չի
լսեր. Գացին անոնք, կերան, խմեցին պարարտ
սեղանէդ, խնկարկեցին քեզ ու հիմա երբ ինկած
ես, հեռու, հեռու փախան, Վատեր են անոնք:

գձուձ և ստորին մարդեր, որոնց մտերմութեան
կռուանը չահն է, ու գառնուկի մարմեր հազած
գալլի դերեր կը կատարեն ընկերութեան մէջ:

Դիմակաւորները կը վիտան ամենուրեք.
Հոգի կուտան քեզի համար, գոնէ այնպէս կը
կարծես, երախտապարտ կը զգաս անձդ հանդէպ
անոնց օձի, կոկորդիլոսի լեզուներուն. սակայն
պահիկ մը վերջ գառն իրականութիւնը կիմա-
նաս, հաւատալ իսկ չես ուղեր ականջներուդ, ո-
րոնք քու շրպարտուիլդ ու բամբասուիլդ կը լը-
սեն:

Ովսաննաներ կրտսն քովդ, ու ետեւդ «ի
խաչ հան պրտ» կը մրմռան: Բարձրացնել կը կեղ-
ծեն գրեզ, սակայն օտքիդ առջև անկեան փոսը
կը պատրաստեն:

Կը ցուցնեն ինչ որ չունին ու չեն ի բնէ,
արուեստակեալ ձեւերով, ծաղրելի ու ծիծաղելի
շարժումներով համեստ, աղնի կ'աղն երեւի:

Անաղնի սիրտ մը, անբարեկերթ բնաւորու-
թիւններ, անպիտան գաղտնիքներ, կ'ուզեն,
կը ջանան մաքուր, փայլուն զգեստներու տակ
ծածկել, պատուական գիմակի մը տակ պահել ինչ
որ ունին վատթարու ցած: Գերեզմաններ, որ
լի են մեռելներու ոսկորներով, անշունչ դիակնե-
րով, եւ գեղեցիկ, չքնաղ մարմարէ արձաններով
պճնուած են:

Ուսեալ, զարգացեալ անձերու ձեւերը կառ-
նեն, անոնց շարժումները կիւրացնեն, հագուած,
պճնուած կը շրջին ծախելու ինչ որ չունին, զի
ամենէն ընթացիկն է այսօր:

ԸՏՏ



ԱՉԳԱՅԻՅԵ

Էջմիածնի Վեհաբանի նոր շէնքին շինութիւնը պիտի սկսի առաջիկայ գարունին. Այդ նոր շէնք պիտի շինուի Վեհ. Հայրապետին Պառքու այցելած միջոցին Պառքուի հարուստներէն հաւաքած գումարովը:

Թիֆլիս վախճանած Շուշեցի Միքայէլ Սարգսեան, որ շրջապաններ և կալուածներ ունի նաեւ Սամարղանդի մէջ, իր հարստութիւնը 120 բաժին ընելով, կտակով նուիրեր է 15 բաժինը Շուշիի թեմական հայ դպրանոցին, 5 բաժինը Էջմիածնի ճեմարանին, 5 բաժինը Տփլիսի ներսէսեան հոգևոր դպրանոցին, 3 բաժինը Յոգնանեան օրիոգական վարժարանին և մէկ մէկ բաժին Շուշիի Ագուլիայ և Ղազանչեցոց եկեղեցիներուն:

— Երկրաշարժը Շամախիի քաղաքէն զատ անոր շրջակայ 33 գիւղերու ալ քնասած է. Հազարաւոր դիակներ հանուած են փլատակներու տակէն. Զոհերուն մէջ Հայեր և Ռուսեր քիչ են. րեգհակառակն իսլամներէն շատեր զոհ գացած են աղէտին: Հայերէն 30 հոգի միայն մեռած կայ. թէև ամենուն ալ տուները փլած են. Մինչև մօտ 8 փլատակներուն տակէն հանուած են 2,400 դիակ. ու կարծուի որ զոհերուն ամբողջ թիւը 5000ը կանցնի:

— Քեանդըրիէն Պատրիարքարան քաջուած հեռագիր մը կիմացունէ թէ Հայոց եկեղեցին և դպրոցը կործանած են նոյն քաղքին մէջ պատահած երկրաշարժէն:

— Տոպրիչէն անցնող արժանահաւատ ազգային մը տեղւոյն ազգ. վարժարանը այցելած ըլլալով, ուսուցչական մարմնոյն աշխատութիւնը կը գրուատէ և ուղղուած հարցումներուն աշակերտաց կողմէ տրուած ճիշդ պատասխաններուն համար գոհունակութիւն կը յայտնէ:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

«Իրաւունք»ի խմբագրութեան

Թերթիդ 20րդ թիւն մէջ՝ 81 ստորագրութեամբ Ազգային Հոգաբարձութեան տրուած հանրագրին առթիւ կը յայտարարէք որ թաղ. խորհրդոյ անդամներէն մին այդ 81 անձինքները «խռովարար, ազգային տուրք չի վճարող և անկարեոր» ճանչցուցած է Պ. Էնսրէթթօնին: Արդ, ըստ օրինի կը պահանջենք Ձեզմէ որ թերթիդ միջոցաւ յայտարարէք նաեւ թաղ. խորհրդոյ նոյն անդամին ո՞վ ըլլալը. հակառակ պարագային իրաւունք պիտի ունենանք ըսելու թէ դուք ձեր կողմանէ յերեւած էք այդ պարբերութիւնը:

81 ստորագրողներէն

ՅԱԿՈԲ ԱԶԱՊԼԻՄ

Ալպանիաի մէջ մեծ յեղափոխութիւն ծագած է. Եանեա նահանգի Ալպանացի պէյերը յանկարծ յարձակելով Փիլիպքէս քաղաքին վերայ, տեղական իշխանութիւնները ձերբակալեր և խօնախը քրտներ են. Եանեան զորք խնդրուած է. բայց զօրքերը չեն ուղեր երթալ կըռուիլ ապստամբներուն գէմ ուղիհետեւ իրենց թոշակները չեն վճարուած:

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Օրումի հրատապ հարցը նորէն միութեան խնդիրն է:

Ընդհանուր սարսափի ու աղետի օրերէն անմիջապէս յետոյ, երբ դադութի հոտանքը ողորկեց արտասահմանը ու Հայութեան բաւական ստուար մէկ մասը ցրուեցաւ աշխարհի չորսորդն. այն օրէն ամբոխին մտքին մէջ սա համոզումը գոյացած ըլլալով թէ յեղափոխական շարժումներու անյաշնդութեան ու անոր հետեանք եղող աղետին միակ պատճառը կուսակցութեանց բաժանումն է, փրկութեան գործին յաջողութեան համար հայ յեղ. կուսակցութեանց միութիւնը հարկ անհրաժեշտ համարուելով, սկսաւ ամեն կողմէ մերթ ապառնալից, մերթ աղերասնական աղաղակ մը լսուիլ. միութիւն, միութիւն, Այդ օրէն միութեանական հոտանք մը գոյացաւ ժողովուրդին մէջ: Ատոնցմէ շատեր մէկ կողմէ ահաբեկի ամբաստանութիւններ կ'ընէին կուսակ-

յութեանց վրայ, դողեր, աւազակներ, աղգաւոր-
պաններ կ'անուանէին անոնց վարիչներ, միւս
կողմէ յանուն տարաբաղդ ու թշուառ հայրեն-
եաց, ի սէր փրկութեան Ս. գործին կ'աղաչե-
ին, կաղերսէին անոնց միանալ, միասին գործել:
Ինչ տարօրինակ ու այլանդակ պաշտօնաւոր, աշ-
խատիլ, ջանալ գողեր ու աւազակները (իրենց
խկ խօսքով) միացնել հանրային նուիրակաւ
գործի յաջողութեան համար, ու այս՝ կոյր ու
տղէտ ամբոխին կողմէ չէ միայն, այլ խմբագիր-
ներու ալ՝ որոնք կոչուած են հանրութեան միտ-
քը ղեկավարել ու առաջնորդել:

ժամանակի տեղութեան բաւական երկար շրջանի մը մէջ, մինչև այսօր ալ գեռ, գծրաղ-դաբար, կարելի չէ եղած ուղղել ու շտկել մի-ութեանական ըստածնեբոս մէկ մասին գերա-շանցօրէն այլանդակ այս դադախար:

Կարծողներ կան դեռ, ու անոնք ալ քիչ չեն,
 թէ կեդրոնի ու բիւրօի միացումը երբ տեղի ու-
 նենայ, յեզափոխու լեւան գործը օրինաւոր շա-
 ղի մէջ մտած՝ ալ շատ հեշտ ու դիւրին, թերեւ
 վեց ամսուան կամ տարւուան գործը պիտի ըլլայ
 հայրենիքի փրկութիւնը:

Կուսակցութիւններ՝ որոնք ծանր ու ահռելի ամբաստանութեան ներքե կը գտնուին ու անորակելի արաքներու հեղինակներ կը ճանչցուին, անոնց միացումէն անկարելի է յաջողութիւն ակնկալել: Հնչակեաններէ ու Կաջնակցականներէ զուրո՝ Հայ ժողովուրդին ահագին մեծամասնութեան հանդէպ յեղափոխական կազմակերպութեանց խախտած վստահութիւնը անկարելի է չակել անոնց միացումով:

Հայրենիքի ազատութեան գործը՝ Գաշնակ.
ցականներու ու Հնչակեաններու գործ չէ միայն,
այլ ամբողջ Հայ ժողովուրդին. Թէ ի՞նչ ընելու
է հաւաքելու համար ամբողջ հայութիւնը մի
դրօշակի տակ, կռուելու համար բռնութեան դէմ,
այդ թողլով ուրիշ առթիւ, այժմ կուզեմ մատ-
նանիշ ընել միութենականներու սխալ ու անօ-
գուտ ըլլած ցարը:

Ի՞նչ կուզեն միտ թեոնականներ և կամ ի՞նչ նպատակնին. ակնարկ մը շեռենք մեր շուրջ նախ գեռ չեն հասկցած ասոնք թէ մեր անյա-
նորութեան ու հայ արեան ի դուր ոգոջուելու
կատճառներէ մին. թերեւ ամենագլխաւորը՝ չէ
թէ կուսակցութեանց գոյութիւնն եղած է, այլ
նոնց յախումն ու անհաշի. գործունէութիւնը
էին ընթացքով ուրիշ քաղցիին մեր կուսակցու-
թիւններ, եթէ միացած ալ ըլլաին, արդ իւնքը
գլխաւոր տարբեր բան չալիտի ըլլար:

Հայեցիի ասղ սխեմակները զԺգագարար չեն
երիբ աւելի ընդարձակօրէն դրելու այս մա-

անէ, ուրիշ տեղ ուրիշներու կողմէ գործած է ար-
 գէն ընթարձակօրէն այլ նիւթին վրայ ու հիմա
 չեմ ուզեր կրկնութիւն մը ընել, հոգ չէ թէ ա-
 նոր ալ օգտակարութիւնը գիտնալով ըլլալ այդ ։
 Յետոյ մեր միութենականները չեն ըմբռ-
 նած թէ տարբեր գաղափարներ ու ըմբռնումներ
 ունեցողներու մէջ միութիւն գոյացնելու ջանքը
 աննպատակ աշխատութիւն մը ու անօգուտ գործ
 մ'է ։ Նախ գաղափար պէտք է տարածել ու յե-
 տոյ գաղափարակիցներէ միութիւն կազմել ։ Գա-
 ղափարակիցներու միութիւնն է որ հաստատուն,
 տեւական և օգտաւետ կրնայ ըլլալ ։

Միութիւն կը գոչեն ու այնպիսի ընթացք մը կը բռնեն որ պառակտում կ'ստեղծէ։ Միութեան հրաւերին հետ ատելութեան ու պառակտումի փողը կը հնչին, ու եթէ թերթ մը ելլայ անոնց մէջ արարքը քննադատելու, ի՞նչ պատասխանեն ալէկ. «Պէտք չէ միտ թինականներու մասին աննպատկար թիւք մը յայտնէք. հակառակ պարագային իրենք գիտեն եղբւր լռեցնելու կերպը»։ Օհո՛ւ՝ Մարդիկ որ կը պառն ու կը բողոքեն թէ մեր յեղափոխական կազմակերպութիւններ բռնապետական մարմիններ նշան են, թէ անոնց վարիչներ ճակատաբաց, իրենց իսկական գէմքով չեն ներկայանար ժողովուրդին, իրենք ալ միեւնոյն սխալ ուղղութեան ու ընթացքին կը հետեւին։ Ու այս կերպով յետալ միութիւն գոյացնել կուսակցութիւններու ու ժողովուրդին մէջ՝ սղայութիւն է։

թէ ի՞նչ է միութեան մասին մեր կարծիքը,
չնկղարելու համար մերայս քանի մը տալեր, կը
հոստունամ, յաջորդել գրելը

X

—Հրաա արակուեցաւ ԲԱՆԱՍԻՐ օգ առշաա հան
յէսի Փհարվարի պրակը

Տարեկանն է 15 ֆր. Հասցեն է

ՊԱՍՄԱՃԵԼՆ

112 ԳԱԼՎԱՐ ՌԶՐԶՈՒՄ ԲԱՐԻԿ

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ᑭᑦᑲ, ᑭᑦᑲ ᑲᑳᑳ

(ԳԻՒՆՏԷՐԻՃԱԹԸ)

ԱիւլտիրիւսԺիւ Քարալար զէ Հիբիսյէլէր . Մալիւմա
Թը Քէննիյէ . Լուղաթը Լէթայիֆ . Քէննի Էյլէնճէլէր
զէ Բէսիւլի Պիւմէճէլէր:

160 ասհրփէտէն ի պարէթ օլուպ, բէյտէրբ'յ
նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիրինճի ճիւ-
տի խիթամ պուլուպ, իտարէխտանէմիլտէ սա-
թըլմագտա աւր ֆէյ 2 փրանք,

ԵՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Մեր բարբերուն մէջ մուտ գտած եւրոպական տեսակ տեսակ գիրկնախառն, շրջուն պարերը՝ (սաւնա թոյնաւնք) բոլորովին անծանօթ էին մեր նախնեաց, նոր պարերուն մէջ ամենէն համաչափ բարեձեւութեանց խաղցուածք բոյժան է, որ տառնեւութեան դարու սկիզբները Եւրոպայի քաղաքը գեղջուկ սպասուհիի մը, Աննա Ալեթսօքի կողմանէ հարուած է։ Բարեկենդանի օր մը, Աննա, իր տիրոջ հրամանին վրայ, կը սկսի երգելով նորօրինակ կերպով պարել, ներկաները զուարճացնելու համար։ Թէեւ նախապէս իր քուլեքն ու շաքժուածքը երգին չէին յարմարել, բայց քիչ յետոյ բաւական յաջողելով, ընդհանուր գոհունակութեան կ'արժանանան։ Այս միջոցին հոն հիւր գտնուող նշանաւոր երգահանը, Ժոզէֆ Ներուտան, առանց ժամանակ կորսնցնելու նօթագրեց բոյժաներու ամենէն գեղեցիկը զոր յետոյ իմար տի Գուլա նուագի յարմարեց։ Յաջորդ շաբթուն տեղւոյն երիտասարդները Ներուտանի առաջնորդութեամբ պարահանդէս մը կը կազմակերպեն, ուր նորագիւտ բոյժային փորձը յաջողութեամբ կը պսակուի։ Վերջապէս հինգ վեց տարի ետքը այս նոր պարը ընդհանրած, ժողովրդականացած և բոլոր անունով նուիրագործուելով Վիէննա ալ ներմուծուած ու տեղացւոյ սիրական պարը եղած էր։ Նոյնպէս 1840ին, առաջին անգամ ըլլալով Բարիզի Ութրա թատրոնին մէջ տրուած պարահանդէսին մէջ փորձուելով հոն ալ մեծ ընդունելութիւն գտած ու անկէ ամէն կողմ տարածուած է։

Մագորխան առաջին անգամ Սաքսոնիոյ իշխանին եւ Բոլոնիոյ թագաւորին, Օգոստոս Գ. ի տիրապետութեան ժաւանակ Տրէզտի արքունիքին մէջ խաղցուելով հաւնուած է, իր անունը Բոլոնիոյ Մոլոլի կոչուած մէկ գաւառին անունէն առնուած է, որուն բնակիչները մագուր կը կոչուին։ Իսկ քաղաքը անգլիացի գիւղացիներու կողմէ յորինուելով 1710ին ֆրանսա ներմուծուելէ յետոյ ամբողջ եւրոպա տարածուած է։ Ասիկա բոլոր նոր յորինուած պարերէն աւելի ժողովրդական եղած է, որովհետեւ ամենէն պարզ, առողջապահական եւ նուազ յոգնեցուցիչն է ու քիչ մը կը նմանի նախկին պարին որ մարմնոյն անգամները մարզելու հանգամանքը ունէր։

Կաջօքը հունգարական և վաղը գերմանական ծագում ունին։

Աւագ Հիւնգարի օրը սովորութիւն է որ Պալիէրայի խնամակալ իշխանը 12 աղքատ ծեռնիներու սոքիքը կը լուայ։ Այս տարուան համար որոշուած ծերուկներէն 7ը զուգահեռ են, 1ը ճամբայ շտկող, 1ը փերեղակ, 1ը ատաղձագործ և միւս երկուքը անգործ։ Անոնցմէ մէկը 97 տարեկան է, մէկը 95, երեքը 94, վեցը 92 և մէկը 91։

Երչիկի Տօնաւաճառը. — Բարիզի մէջ սովորութիւն է Աւագ շաբթուան մէջ երչիկի աշնավաճառ մը բանալու։ Այս սովորութիւնը շատ հին ժամանակներէ ի վեր կը շարունակուի։ Չարմաշային այն է որ երչիկներու հետ տօնավաճառին մաս կը կազմեն նաեւ հին իրեղէնները, մանաւանդ երկաթեայ և արծաթեայ։ Բայց ինչու այս տօնավաճառը Աւագ Շաբթուան մէջ կը բացուի։ Պատճառը այն է որ, հին ժամանակները Ֆրանսայի մէջ մեծ պահքը շատ մեծ խստութեամբ կը պահուէր, ամէն տեսակ մսեղէն արգիւտած կ'ըլլային ամբողջ 40 օր, ասոր համար մսավաճառները, խոյամսավաճառները իրենց տօնավաճառը կը բանային Աւագ շաբթուան մէջ, որպէս զի ժողովուրդը Չապի տօներէն առթիւ մսեղէն և խոտեղէն գնէ։ Ահա այս է սովորութեան սկիզբնապատճառը, որ մինչեւ այսօր — թէեւ Մեծ Պահքին կարեւորութիւն տուող շատ չըլլայ — կը տեւէ։ Կրօնական այդ զգացմունքին համար է դարձեալ որ յիշեալ տօնավաճառէն բոլորովին հեռի կը պահուին միւս տօնավաճառներու յատուկ արախութիւնները և զուարճութիւնները, այսինքն երաժշտութիւն, թատերական ներկայացումներ, ևլն։

1000 Հնդկի զինուորներ մայիսին Լոնտոն պիտի երթան, էտուարտ թագաւորին թագադրութեան ներկայ գտնուելու համար։ Ասոնց 750ը հետեակազօրք և 250ը հեծելազօրք են, Գնդապետ Տոսըն պիտի հրամայէ այս դուռներ, որ ամեն տեսակ զօրք և Հնդկաստանի ամեն բոլոր կարևոր ցեղերէն ներկայացուցիչներ պիտի պարունակէ, ամեն ցեղ իրեն յատուկ համազգեստը պիտի ունենայ։ 100 կամոնաւորներէ շուկաւոր պիտի ընկերանան Հնդկի զուգին։ Այս բոլոր զօրքերը Լոնտոնի մօտերը մասնաւոր բանակեալի մը մէջ պիտի բերեն իրենց վրանները և պէտք եղած նիւթերը։ Ասոնցմէ զատ թագադրութեան ներկայ պիտի գտնուին շատ մը Հնդկի իշխաններ, ցեղապետներ, Մահարաճաներ։

Անտէ Սպաննուեր է. — Նիւ-Եորքէն կը հե-
ռագրեն թէ երկու տարի առաջ յանդուգն բե-
ռախոյզին ետեւէն շրջուած արշաւախումբը այս
անգամ վերադարձեր է. Արշաւախումբին ան-
դամները դէպի հիւսիսային Բեռն ուղեորած ա-
տենին ճամբան քանի մը Եսքիմացիներու հան-
դիպեր են որոնք յայտարարեր են թէ իրենք օ-
դապարիկ մը տեսած էին. որ վար կ'իջնէր. մէ-
ջը երեք ճերմակ մարդիկ կային. որոնք դուրս
ելան. Եսքիմացիները զանոնք տեսնելով կրակ
բրին և երեքը մէկէն սպաննեցին.

Մարտ ամսոյ օրը ինչո՞ւ փոփոխակաւն է

—>>>><<<<—

Տեսէք ի՞նչ կ'ընէ աւանդութիւնը.

Երբ ամիսները դեռ դասաւորուած չէին.
խորհուրդ կ'ընէն իրենք իրենց ու ժողով մը գու-
մարեն. և տարւոյն ամառը օրերը հաւասարապէս
բաժնեն մէջերնին. ժողովը կը սկսի. բայց Մար-
տէ բացակայ էր. փետրվարը կը զրկեն որ եր-
թայ կանչէ զայն. բայց խեղճը ի դուր կ'աշխա-
տի զայն համոզելու որ գայ. պարզապէս կը վը-
ռնտուի Մարտէն. Միւսներն ալ տեսնելով որ
ժամանակը անցած էր. 11 հոգիով (ամիսով) նիս-
տը կը բանտն. և գործերնին կարգի և կանոնի
կը մտցնեն. նոյն միջոցին գուրսը աղմուկ մը կը
լսուի յանկարծ. Մարտն է որ կը պոռայ ու կը
կանչէ իրեն եղած շրջանքին դէմ. Ներս կը մրտ-
ցնեն զինքը. Մարտ կը բողոքէ առանց իր ներ-
կայութեանը ժողովը ընելու զէմ. և իր ուե-
փական օրերը կը պահանջէ. Միւսները տես-
նելով որ ճար չկայ. կ'որոշեն որ իրենցմէ իւրա-
քանչիւրը ունեցածէն մէկ քանի օր նա իրէ մար-
տին. Յունվարը իր օրերէն 3 օր կը բաշխէ. այս
պէս կ'ընեն նաև միւսները. մինակ յուշիւրը և օ-
ղոստոսը երկերկու օր կուտան. Ահա այս պատ-
ճառաւ է որ մարտ ամսոյ մէջ օր մը ցուրտ կ'ընէ
ուրիշ օր մը տաք. այսօր ձիւն կուգայ. և վաղը
պայծառ արև կը ծագի.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲՍՈՒԱՐԱՆ

—>>>>—

Անաստուածութիւն. — Գիտնական տգէտնե-
րու գաւառանքը.

Նախտնձ. — Սիրտ խանձող դժոխքի անմա-
րելի կրակին նախակայքը.

Գինեմուլութիւն. — Վատ կրից մեքենանե-
րուն վայրաշարժը.

Ծխամուլութիւն. — Կամար հրձիգութիւն
քսակի. առողջութեան և ժամանակի.

Երջանկութիւն. — Սողոմոնեան «ունայնու-
թիւն».

Մայր. — Մարդկութեան լաւ կամ վատ հի-
մնադիրը.

Պատարագիչ. — Աստուծոյ և մարդոց միջեւ
փոխանորդ հաշտարարը. որ շատ անգամ անհաշտ
է իր նմանին հետ.

Հաւատք. — Հոգիի դիտակը.

Յոյս. — Մարդկային կեանքի կէսը. որու պա-
կասութիւնը անձնապանութեան կ'առաջնորդէ
մարդս յաւէտ.

Աղօթք. — Առ Աստուած ուղղուած անթել
հեռագիր.

Աղորմութիւն. — Առաւ տոկոս բերող գումար
մը. աստուածային ապահով պանքային յանձնու-
ած. եթէ չէ ուէքլամ մը.

Պահք. — Մեղաց պարտքի փոխարէն Աստու-
ծոյ պանքային քաշուած կեղծ «չէք» մը. երբ
չի կրեր օրինապահութեան կնիքը.

Սուտ. — Մեղքերու ծածկոյցը որ մերթ թան-
ձրը և մերթ թափանցիկ կ'ըլլայ.

Երդում. — Ստախոսներու դրամադուլսը.

Յիշոց. — Բարկութեան փրփուրը որ յաւէտ
արդիւնք է փաստի պակասութեան. Գ.



Ճամբորդ մը գիւղէ մը անցած պահուն մի-
ամիտ գիւղացիի մը կը հարցնէ.

— Էշերու քաղաքը ա՞յս է.

— Մեր գիւղէն շատ էշ կանցնի. բայց ո՞ւր
բնակելնին չեմ գիտեր. կը պատասխանէ սրամիտ
գիւղացին.

— Պղտիկը ի՞նչպէս է դասերուն մէջ.

— Օհ. բաւական յաջողակ. միայն դրաբա-
սին հետ հաշտ չէ. շատ անգամ բառերը կը ծա-
մեմ ու բերանը կը գնեմ. դարձեալ օգուտ չունի.

— Կերևայ թէ կը գանի.

ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Տղայ, եկուր դեմքս նստե
Ասուր կրտսն. ա. պե. սե. սե.

Կեցի՛ր սեսնեւ. եզա՞ծ ես աշ.
Ըսե նայիւ. ե. ե՞ժ. ժե. աշ.

Կրնա՞ս հնչեյ, ծօ Միխայել,
Սա չորս գիրք. ի. ժի. քա. ել.

Մտիկ կրնե՞ս կոր Սերոբե,
Միսքի պահե, եմ. եմ. օ. քե.

Գիրե՞ս, աչքս քու երեսդ է,
Շուտով քսե. քիւ. եւ. ես. դե.

Զարգողին կրտսն կոյ է.
Սա երկուսին քսե. իւ. վե.

Վերջը կ'ուսես սխալի պետեկ,
Հիւս կարդա. իքրս. իկրեկ.

Կը քաշեւ հա՛ քուկին մագեդ.
Աս գիրերուն վերջինն է. գեդ.

Գ. Ս.

Պարոն Գէորգ. իրիկուն մը շուկայէն վերա-
դարձին՝ մամիկը անոր կըսէ.

— Կէորգ, ես վրում, պղտիկ աղբօրդ եմ վրան.
դին պիտի ապապրես քի՛ մէյ մըն ալ սա քո-
վիններուն տղուն՝ մուշու Միքիանին հետ չի
տեսնուի.

— Ինչո՞ւ, ի՞նչ կայ որ. անիկա խելացի ու
խելօք տղայ մըն է.

— Կիտի չի խոստած թղալնոց. ես ալ քեզի
պէս խելացի ու շարխատէ տղայ մը կ'իտէի մա.

— Ճանըմ, ի՞նչ ըրաւ որ.

— Տահա ի՞նչ պիտի րնէ. իրիկունը հոս ե-
կեր աղբօրդ հետ կը տեսնուէր կոր, ես ալ պա-
նի մը մէջաքլանմիշ ըլլալով «էօֆ, բուֆ» մը
ըսի նէ՛ աղբօրդ տառձաւ. եմբանդ, մամդ ֆը-
րանկըզնա ու ինկիլիզնէ կ'իտէ եղբր ըսաւ.
պէօպէօյիւք կ'նիկ, ես անոր մայրնապն եմ. Ծը-
րանկըզնա ու ինկիլիզնէ՛ էր պակաս.

Պարոն Գէորգ քանի մը վայրկեան մտածելէ
ետք՝ քմծիծաղով.

— Մեծ մայր, դուն անոր միտքը չես հա-
կցեր, անիկա քեզի մայրնապ ըրած չէ. ընդհա-
կառակը ըսածը շիտակ է.


— Տէրօրորմեա, դուն ալ անոր թարաֆ կել-
լաւ կոր.

— Թարաֆի բան չի կայ. մօտիկ ըլլէ որ ը-
սեմ. ֆրանկըզնա «էօֆ» հաւկիթին կըսեն.
«բուֆ»ն ալ ինկիլիզնէ ուռենալ ըսել է.

— Վույ էրկո՛ւ աչվընիդ խաղայ պիլէքիմ, քա-
չըմե՛ն, արատու հեղ մը նեղուած ատենա էօֆ,
բուֆ կըսեմ նէ՛ ֆրանկըզնա ինկիլիզնէ կը խօ-
րաթեմ եղիւր տէ՛ հիշ խաղար չուսիմ, հէ՛.

ԽԻՍՏ ԺԱՅԵԿԱՆ ԱԶԴԵՐ

Մի՛ գնէք ձեր կօշ կնեբը,
առանց ալցելելու անուա-
նի կօշկակար Գայաֆիչի-
եանիս խանութը, ուր Զատ-
կի առթիւ աճելէ լծէրթիպ
պատրաստուած կօշիկները
մուգապա տօլմախներ են.



Առնում չափեցնելի
կամ քան չի նեղ
բէք չենք մոռնալ

Օ ԲԱՆԹԱԼՈՆ ԵՒ ԵԼԼԻՆՈՆ

Զատիկի առթիւ մեծ աւուրք



Վաճառատուն սկզբունքն է աժան
վաճառել շատ վաճառելու համար, (դուն
հասկցիր չխրխնեբը քչելու համար).
Սաչափ կըսենք թէ՛ բանթալուն մը տա-
նել ուղղոյ աճե՛նէն թերեհաւատն ան-
գամ պիտի համոզուի ու հաստատէ որ ստիպ-
ղական դործի մը երթալու ատեն եթէ ոտքերը
քիչ մը աւելի բանալու անխոհեմութիւնն ունե-
նայ նոյն հազամ բանթալունին յատակը երկու-
քի կը բաժնուի.



Ամեն տեղ հարցուցէք դունաւորեալ ըս-
պիրքն որ կը կոչուի «Գօնեաք», կլիցէք
ու թուրք բնիկ խանութեցէք.


Գինեպան Օհանեան

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (50)

ՌԷՆԷ ՏՐԻՍԵ ՍԵ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՊԱՐՄԱՐ-ՄԱՄԱՐԵ



Երախտագիտութեան այս ցոյցը կատարելէն յետոյ, կանչեց իր ծառաները, բերքինսին հետ իր կոնտոլան մտաւ, եւ երկու մակոյկները բով բովի ճամբայ ելան դէպի գործակալատունները:

Քառորդ ժամ ետքը, բարափին կը մօտենային, եւ շուրջ, միշտ նուազած, սենեակ մը փոխադրուած էր: Ուր անդլիացիները կը պահպանէին զայն, որպէս զի առտուն ոստիկանութեան վերատեսչին յանձնեն:

Գիշերը շատ առաջացած ըլլալով՝ Մէնկ չէր կրնար տուն դառնալ, մնաց որ ամենիւն չէր սրտատած չհեւանալով այն մարդէն զոր գտնելու համար այնքան յոգնած էր: Ուստի ընդունեց իր աղափարաններուն ասպնջականութիւնը եւ կակուղ թիկնաթոփի մը մէջ տեղաւորուելուն պէս եւ խոշոր գաւաթ մը շերտիքով կաղարփուելէն ետք, իր բարեկամէն քանի մը լրացուցիչ տեղեկութիւններ ինչորեք, վասն զի բոլոր այս գէպերը որոց կը խառնուէր ինք, մեծապէս կը խռովէին իր ուղեղը:

—Աստուած իմ, սիրելի մանտարէնս, պատասխանեց նաւապետը, պատմութիւնս երկար չպիտի ըլլայ: Յաջորդ օրն այն օրուան ուր նամակս ընդունեցիք, յատրոններուն դէմ արշաւանքը պատրաստուած էր: Էֆրէնը, աւա՛ղ, չէր կրնար մասնակցիլ, բայց ես միացայ անոր: Ընորհիւ այն տեղեկութիւններուն զորս տուած էր խեղճ Բէյ—Հօն...

—Ա՛հ, այս, կախեալը: Ահա բան մըն ալ որուն խելքս չի հասնիր:

—Ետքէն պիտի բացատրեմ ձեզի: Ընորհիւ այն տեղեկութեանց, կրցանք յանկարծ ցամաք ելլել ի վանկ—Մու, ուր չէին սպասեր մեզի: Հաւատացէք որ բարեկամիս վրէժը լուծուեցաւ: Երբ կղզիէն հեռացանք՝ ողջ մարդ մը չէր մնար հօն: Կռուին մէջ չմեռնող բոլոր աւաղակները մեր նաւերէն մէկը փոխադրուած էին: Ա՛հ, աղէկ պաշտպանեցին ինքզինքնին: Այս թըշուառականներէն մէկը մեր աչքերուն առջեւ դաշունահար ըրաւ խեղճ աղջիկ մը որ օգնութիւն կը կանչէր

մեզի: Տիկին Լիուի նախկին սպասուհին էր:

—Ֆուս—Սիէն անհետ եղողը, վա՛րդը:

—Այո, նոյն ինքն: Չուն վա՛ւրդ—Բիին յանձնած էր զայն. ճիւղը մեռցուց աղջիկը որպէս զի մեր ձեռքը չանցնի: Երբ Հօնկ—Քոնկ դարձանք, իմացանք թէ փոխարքան հաղորդած էր կառավարչին որ կը հաւանէր լատրոններու արշաւանքին, եւ որպէսհետեւ նահանգին սահմանագլուխներէն լուր առած էր թէ Թայ—բինկները կը նահանջէին դէպ հիւսիս. իշխանը կը յաւելուր թէ բարեք յարարերութիւնները պահ մը իսկ չպիտի դադրէին գաղթականութեան եւ իր կառավարութեան միջոց:

—Ասոնք չէին գիտիր: Իրաւ է որ քաղաքակաւնութիւնը շատ չի շահագործեր զիս:

—Չէի մոռցած թէ ճիշդ յաջորդ օրն էր որ ասեղի պիտի ունենար Սօլ—Պրոտէի եւ Ի—Թէի պատիժներուն գործադրումը:

—Եւ իմի՞նս:

—Ու ձերի՛նը: Ուստի առանց ժամանակ կորուսելու ճամբայ ելայ, վերջին փորձ մըն ալ ընելու համար ն, Բարձրութեան մօտ: Ի Հօնան գտայ ձեր նամակը որ դժբախտաբար չէր ըսել, ձեզ ինչ ըլլալը, եւ ձեր մասին շատ մտահոգ գործակալատուն դարձած պահուս էր որ:

—Իմ բարի՛ Բերքինս:

—Ընդունեցի մեր լուրորդը: Մնացածը գիտէք:

—Ա՛հ, բարեկամս: Ո՛րչափ երախտապարտ եմ:

Եւ, աչքերն արտասուալից, գէր մարդը նետուեցաւ մաքսախոյսին բազկացը մէջ:

Այս պատմութեան միջոցին, լոյսը ծագած էր եւ ծովամայրը սթափած, շնորհիւ ընդունած աղիւ գարմանին:

Երբ ելելութիւնն իմացաւ, եւ իր շուրջը ճանչցաւ իր անողոր թշնամիները, որք իրենց ձեռքին մէջ կը բռնէին զինք, գիմագծերը սոսկալի ատելութիւն մը արտայայտեցին. բայց շուտով հասկցաւ թէ այնուհետեւ ամեն պայքար անօգուտ էր, յաղթուած էր ինք, եւ իր ցեղին մարդոցը յատուկ ճակատագրապաշտութեամբը համակերպեցաւ:

Ժամ մը ետքը, իշխանը իմացած էր Չուին կալանաւորումը, տիկին Լիու կիմացունէր իր աղջկանը եւ Ի—Թէին թէ ազատուած են, լէնկի սպանիչը փակուած էր բանտի մը մէջ, ուսկից դուրս պիտի ելլէր միայն դատուելու համար, եւ եղբունագատ ատենին մեծարոյ նախագահը հեշտօրէն կը բազմէր իր կոնտոլան բար-

ձերուն վրայ մոմնջելով.

— Փառք բեզ Պուտտա : Եւ բիզ ալ, սիրելի բերքին : Վերջապէս չպիտի ընդունիմ պամպուի հարիւր հարուածները : Ուրեմն նորէն պիտի գտնեմ իմ փոքր կենցազս այնքան անուշ, այնքան անդորր : Բայց ի՞նչ տարօրինակ արկած, կը վախնամ որ ստամոքսս երկար ատեն նեղուի :

Բ.

Յամր մահը

Դիւրին է գուշակել թէ Չուի դատին բնութիւնը երկար չբռնէ :

Մէնկ, որ ոչ նուազ անհամբեր էր վրէժ լուծելու այն շարք մը ստորնացուցներուն համար զորս կը պարտէր նախկին մսավաճառին, բան իբրեւ դատաւոր իր պատիւը վերահաստատելու, գործերն այնքան շուտ առաջ տարաւ որ ձերբակալուէն երեք օր ետքը, մարդասպանը դատարան կը ներկայանար :

Մեր ընթերցողներն անշուշտ կը յիշեն ունկնդրութեան սրահը ուր մտցուցինք զիրենք պատմութեան ըսկիզբը, ներկայ գտնուելու համար Սօլ—Պրոտէի և իր զարմիկին մարտիրոսութեանը : Բաղժութիւնը հիմակ աւելի հոծ էր բան առաջին դատին. երկու կտրգ ոստիկաններ հազիւ կրնային զսպել զայն :

Երբ Չուին երեւցաւ պահապաններուն մէջտեղ որք կառաջնորդէին զայն երկաթէ շղթայով մը, ամբողջ զայրոյթի ազդակներ արձկեց :

Այսպէսով կուգէր բոցորել այն ատելութեան գէժ զոր բանի մը շարժման տուժ տուած էր երկու անմեղներուն : Բայց այս ցոյցեր բնաւ չխռովեցին թշուառականը : Յառաջանալէ ետք այնքան շուտով որքան թող կուտային իր առաջնորդները, բարձրադուխ և ակնարկը բռնարձակ, կեցած էր այն սանդուխին տակ որ ատեն կը տանէր :

Ինչպէս միշտ, այս սանդուխին աստիճաններուն վրայ կը գտնուէին դահիճին օդնականները՝ իրենց տանջանքի գործիներովը պինուած, բայց ներկաները կը վախնային որ անօգուտ չըլլային անոնք : Արգարեւ հաւանական էր որ Չու իր գատաւորներուն առջիւ կրկնէր այն խոստովանութիւնները զորս ըրած էր բանտին մէջ :

Իսկ Մէնկ նստած էր իր նախագահական աթոռին վրայ : Երբէք աւելի ծանրաշուք, աւելի արժանաւարկ, աւելի հպարտ չէր եղած իր պաշտօնին մէջ :

Բերքինսին խնդիրքովը՝ Սօլ—Պրոտէ գերծ պահուած էր դատարան երեւնալէ. բայց ի—թէ, երբեմնի գլխաւոր ամբաստանեալը, հոն էր, գահաւանդին մասնաւոր աթոռներէն մէկուն վրայ, դատարանէն բանի մը քայլ հեռու եւ տիկին իւրին մօտ : Էդեռնադատ առանին նախագահը անոնց ներկայութիւնն անհրաժեշտ դատած էր : Հոն էր նաեւ մարտիրոսը եւ իր բարեկարգ մը սըր Արթուր, որք այնքան կարեւոր դեր մը խաղացած էին ճշմարիտ յանցաւորին ձերբակալմանը մէջ : Փոխարքան իսկ իր կողմէ ներկայացուցիչ մըն էր զըրկած :

Երբ լուծութիւնը տիրեց, Գօ—Հօբին գործակալներուն կողմէ բաշխուած խաւարազանի հարուածներուն շնորհիւ, Մէնկ հանդիսապէս խօսք տաւ :

— Դուք Չու անուանեալն էք, նախկին մսավաճառի ֆուն—սի, հարցուց ամբաստանեալին :

— Այդ է իմ անունս, պատասխանեց սա դաժան ձայնով մը, եւ մսավաճառ էի ֆուն—սիի մէջ :

— Լէնկ—Թա—Լանկն սպանեցի՞ք հարսնիքին գիշերը :

— Այո :

(Շար.)

ԾԱԽՈՒԴ ԻՐԻՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին :

Լուսինեան, Իշխան — Ֆրանսահայ Բառարան դին 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք :

Թ. Գ. Հինտլեյսին — Տեսական և գործնական Բերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ուկէս ֆր. Շէյքսպիրի Համլէթը, ուղբերգ. 2 50 ֆր. Խրթութիւններ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովասուն " 25 "

Արտաստեալութիւն " 20 "

Բաղդախաղ պատկեր 25 սնդ.

Թապալաքեայր Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահաւարկութիւն միւլքեաֆաթը, գոմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Գաղանձ դօճա եախօտ Էնֆիյէճի, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность" — Варна